



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ **ՎԴ/9254/05/21**
2024թ.

Վարչական գործ թիվ ՎԴ/9254/05/21

Նախագահող դատավոր՝ Ս. Հովակիմյան

Դատավորներ՝ Ա. Առաքելյան

Կ. Գևորգյան

Ո Ր Ո Շ ՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
զեկուցող Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ
Լ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ք. ՄԿՈՅԱՆ

2024 թվականի դեկտեմբերի 05-ին

գրավոր ընթացակարգով քննելով «ՊԱՊԻՐՈՒՍ ԳԼՈՐԱԼ» ՍՊ ընկերության
վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 21.12.2023 թվականի որոշման
դեմ՝ վարչական գործով ըստ հայցի «ՊԱՊԻՐՈՒՍ ԳԼՈՐԱԼ» ՍՊ ընկերության (այսուհետ՝
Ընկերություն) ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ Կոմիտեի)
Կոմիտեի հետբացթողումային հսկողության վարչության 04.05.2021 թվականի թիվ 0017-Ո-
1 որոշումն ամբողջությամբ անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է ամբողջությամբ անվավեր ճանաչել
04.05.2021 թվականի թիվ 0017-Ո-1 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ներսիսյան) (այսուհետ՝ Դատարան)
21.06.2022 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 21.12.2023 թվականի որոշմամբ ՀՀ Կոմիտեի վերաքննիչ բողոքն ամբողջությամբ բավարարվել է՝ Դատարանի 21.06.2022 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը (ներկայացուցիչ՝ Գոհար Ավագյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ, 25-րդ, 27-րդ և 124-րդ հոդվածները, 145-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, 146-րդ հոդվածի 4-րդ մասի «գ» կետը, կիրառել է ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 126-րդ հոդվածը, որը չպետք է կիրառել, չի կիրառել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը, «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի 123-րդ հոդվածի 2-րդ մասը, որոնք պետք է կիրառել, սխալ է մեկնաբանել նույն օրենսգրքի 136-րդ և 316-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության համար 23.08.2010 թվականից ուժի մեջ մտած «Կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերի ներմուծման մասին» 22.11.1950 թվականի համաձայնագրի (այսուհետ՝ նաև Համաձայնագիր) արձանագրության (Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 23.02.2011 թվականից) 1-ին հոդվածի 1-ին կետը, «Ը» հավելվածով սահմանված արտոնությունների պայմանները, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածը, 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, ՀՀ կառավարության թիվ 112 որոշումը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզառաբանել է հետևյալ փաստարկներով.

Առկա է Համաձայնագրի «Ը» հավելվածով սահմանված նյութական իրավունքի նորմերի զարգացման անհրաժեշտություն: Կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների ներմուծման համար Համաձայնագրով նախատեսված մաքսային արտոնությունների կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան միատեսակ և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար: Ըստ այդմ՝ անհրաժեշտ է Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումը Համաձայնագրի «Ը» հավելվածով սահմանված նյութական իրավունքի նորմերի առնչությամբ՝ մասնավորապես կարևորելով այն հարցադրումների պարզաբանումը, թե արդյոք կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների ներմուծման համար Համաձայնագրով նախատեսված մաքսային արտոնությունների կիրառումը պայմանավորված է այն հանգամանքով, թե ներկրվող ապրանքը հետագայում օգտագործվել է իր նպատակային նշանակությամբ անմիջականորեն այն ներմուծողի կողմից, թե իրացվել է այլ անձանց, որոնք ներկրվող ապրանքը հետագայում օգտագործել են իր նպատակային նշանակությամբ, արդյո՞ք Ընկերության կողմից ներմուծված ապրանքները կարող են որակվել որպես պայմանականորեն բաց թողնված ապրանքներ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ հավելված «Ը»-ում նշված ապրանքների առնչությամբ պայմանավորվող պետության Արձանագրությամբ ստանձնած պարտավորությունն է այդ ապրանքներն ազատել մաքսային տուրքերից կամ ներմուծման հետ կապված այլ վճարներից, եթե հաստատված է, որ ներմուծվող ապրանքն իր բնույթով և նպատակային նշանակությամբ նույնն է, ինչ հավելված «Ը»-ում նշված ապրանքը, և հանդիսանում է այլ պայմանավորվող պետության արտադրանք:

Ինչ վերաբերում է հետագայում այդ ապրանքների ներմուծմանը՝ տնօրինումը սահմանափակող որևէ դրույթ առկա չէ ո՛չ ՀՀ կառավարության որոշմամբ, ո՛չ էլ մաքսագերծման փաստաթղթերով, ավելին՝ կարգը սահմանում է արտոնության կիրառումը՝ ըստ լիազոր մարմնի տրամադրած դրական եզրակացության, ինչն առկա է եղել սույն դեպքում և ներկայացվել է Դատարան գործի քննության ընթացքում, այսինքն՝ ապրանքների բնույթով պայմանավորված արտոնությունները Համաձայնագրի շրջանակներում կիրառվել են լիազոր մարմնի կողմից, և հայցվորի կողմից ներկայացված դիմումները բավարարվել են, ինչն ուղղակիորեն փաստում է, որ նախատեսված բոլոր ընթացակարգերը, այդ թվում՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված ընթացակարգը և ներկայացվող փաստաթղթերի պահանջները ենթադրում են ապրանքների բնույթի համապատասխանություն կոնվենցիոն նպատակներին, իսկ անձի վրա հավելյալ պարտավորությունների բեռ դնելը, որը որևէ օրենսդրական ակտով սահմանված չէ, առնվազն օրինականության սկզբունքի խախտում է, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Համաձայնագրով սահմանված ապրանքների ներմուծման համար արտոնության կիրառման սահմանափակում նախատեսելով՝ վերավաճառքի արգելքի տեսքով՝ Կոմիտեն ոչ իրավաչափորեն ընդլայնել է արտոնությունը տրամադրելու Արձանագրությամբ սահմանված պայմանների շրջանակը և ըստ այդմ՝ սահմանափակել է այդ արտոնությունից օգտվող սուբյեկտների շրջանակը՝ արտոնությունից օգտվելու հնարավորությունը վերապահելով միայն այն ներմուծողներին, ովքեր անձամբ են զբաղվում տպագրական գործունեությամբ: Ակնհայտ է, որ Կոմիտեի նման մոտեցման պայմաններում չի ապահովվում Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարումը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ վարչական մարմինը պատասխանատվություն է կիրառել սուբյեկտի նկատմամբ՝ ոչ պատշաճ վարչարարության արդյունքում, քանի որ վերջինս չի հիմնավորել որևէ կերպ, թե որ պահից են խախտվել ենթադրյալ սահմանափակումները: Այսպես, տույժերը հաշվարկվել են ներմուծման պահից, սակայն միայն այն ապրանքների նկատմամբ, որոնք արդեն իսկ իրացվել են, իսկ այն ապրանքները, որոնք դեռևս իրացված չեն և պահվում են Ընկերության մոտ, չեն համարվել պատասխանատվության օբյեկտ:

Ոչ պատշաճ վարչարարությունը դրսևորվել է նաև այն հանգամանքով, որ վարչական մարմինն անտեսել է լիազոր մարմնի կողմից տրված դրական եզրակացությունը՝ արտոնության կիրառման համատեքստում, որևէ կերպ չի հիմնավորել այդ եզրակացությունից շեղվելու օրենսդրական հիմքերը: Ստացվում է, որ մի կողմից առկա է լիազոր մարմնի դրական եզրակացությունը, մյուս կողմից՝ Կոմիտեի՝

պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը, որոնք հակասում են միմյանց, ինչպիսի պայմաններում Լիազոր մարմնի առավել վաղ տրված դրական եզրակացությանը չվստահելու բեռը չի կարող դրվել այն անձի վրա, հոգուտ ում այն կայացվել է՝ մի կողմից, մյուս կողմից՝ առկա է հստակ ձևավորված միջազգային պրակտիկա Համաձայնագրի «Ը» հավելվածով սահմանված արտոնությունների կիրառման առնչությամբ:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Համաձայնագիրը՝ դրա կիրառելիությունը պայմանավորում է նյութերի ներկրումից հետո դրանք նպատակային նշանակությամբ օգտագործվելու հանգամանքով, անկախ նրանից, թե ով է դրանք նպատակային նշանակությամբ օգտագործում՝ ներկրողը՝ անմիջականորեն, թե՛ երրորդ անձը, որը ներկրողից ձեռք է բերել խնդրո առարկա նյութը:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 21.12.2023 թվականի որոշումը՝ ամբողջությամբ օրինական ուժ տալով Դատարանի 21.06.2022 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) հայցվորը 01.03.2018 թվականից 04.05.2021 թվականն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետություն է ներմուծել և տարբեր ծածկագրերով հայտարարագրել է տարբեր տեսակի թուղթ և սովարաթուղթ (**անվիճելի փաստ**).

2) Կոմիտեի հետբացթողումային հսկողության վարչության կողմից 04.05.2021 թվականին կազմվել է արտագնա մաքսային ստուգման թիվ 0017-Ա ակտը, որով արձանագրվել է, որ «(...) *Ընկերությունը չունենալով արտադրական հնարավորություններ՝ փայագրափուն, արտադրական սարքավորումներ և զբաղվելով բացառապես առևտրային գործունեությամբ՝ իր կողմից ՀՀ ներմուծված և մաքսատուրքերը չվճարելու արտոնությամբ մաքսային ձևակերպում ստացած, պայմանականորեն բաց թողնված ապրանքները իրացրել է ուղղակի վաճառքի միջոցով: (...) Ընկերության կողմից խախտվել է ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 126-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները՝ չեն պահպանվել ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների փրամադրման նպատակներն ու պայմանները, ինչպես նաև այդպիսի արտոնությունների կիրառման հետ կապված այդ ապրանքների օգտագործման և (կամ) փնտրման մասով սահմանափակումները»:* Ընկերությանն առաջարկվել է վճարել պակաս գանձված մաքսային վճարները և տույժերը (**հատոր 1-ին, գ. թ. 121-124**).

3) Կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի 27.07.2021 թվականի թիվ 53/2 որոշմամբ Կոմիտեի հետբացթողումային հսկողության վարչության արտագնա մաքսային ստուգման 04.05.2021 թվականի թիվ 0017-Ա ակտի դեմ Ընկերության դիմում-բողոքը մերժվել է (**հատոր 1-ին, գ. թ. 28-39**).

4) Կոմիտեի հետբացթողումային հսկողության վարչության պետը 04.05.2021 թվականին կայացրել է «Մաքսային գործի ոլորտում» թիվ 0017-Ռ-1 որոշումը՝ մաքսային վճարների և մաքսային մարմիններին վճարվող այլ վճարների լրացուցիչ հաշվարկում ու գանձում կատարելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով նշված որոշումն

ստանալուց հետո՝ 10 օրվա ժամկետում վճարել պակաս հաշվարկված մաքսային վճարները և տույժերը՝ համաձայն հավելված 2-ի (**հատոր 1-ին, գ. թ. 16-18**):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ Համաձայնագրի արձանագրության «Ը» հավելվածի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր, ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը.

- արդյո՞ք կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների ներմուծման համար Համաձայնագրով նախատեսված մաքսային արտոնությունների կիրառումը պայմանավորված է անմիջականորեն ներմուծողի կողմից այդ ապրանքներն իրենց նպատակային նշանակությամբ օգտագործելու հանգամանքով:

Նախևառաջ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ թիվ ՎԴ/4724/05/17 վարչական գործով նախկինում կայացրած որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը կարևորել է Համաձայնագրի արձանագրության «Ը» հավելվածի առարկա ապրանքները Հայաստանի Հանրապետություն ներմուծելուց հետո դրանց նկատմամբ մաքսատուրքերի, հարկերի վճարման համար սահմանված արտոնություններ կիրառելու պարտադիր պայմանների վերաբերյալ իրավական դիրքորոշումներ արտահայտելը՝ այն պայմանավորելով նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու անհրաժեշտությամբ:

Նշված գործով վկայակոչելով և վերլուծության ենթարկելով Համաձայնագրի արձանագրության 1-ին հոդվածի 1-ին կետը, 8-րդ հոդվածի 14(ա) կետը, «Ը» հավելվածը, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը. «Հայաստանի Հանրապետությունը վերը նշված միջազգային պայմանագրով 23.02.2011 թվականից պարտավորություն է ստանձնել մաքսային փուրք և ներմուծման հետ կապված այլ վճարներ չկիրառելու Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ստորև նշված հետևյալ ապրանքների համար՝

ցեյլուդային զանգված, թափոնների վերամշակումից ստացված թուղթ, թերթային և այլ թուղթ՝ փպագրության համար, փպագրական ներկեր, սոսինձ և այլն, ինչպես նաև ցեյլուդային զանգվածի և թղթի մշակման համար նախատեսված մեքենաներ,

ինչպես նաև տպագրական և կազմարարական մեքենաներ՝ պայմանով, որ ներմուծող երկրում տվյալ պահին համարժեք տեխնիկական որակի մեքենաներ չեն արտադրվում, հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

1) եթե դրանք օգտագործվում են գրքերի, հրատարակությունների և փաստաթղթերի արտադրության համար.

2) 1-ին կետում նշված ապրանքները հանդիսանում են այլ Պայմանավորվող պետության արտադրանք»:

Միևնույն ժամանակ ՀՀ վճարեկ դատարանը վկայակոչել է վերը նշված միջազգային պայմանագրի հիմքով ՀՀ կառավարության կողմից 05.02.2015 թվականին ընդունված «Առանց ներմուծման մաքսատուրքի վճարման «Կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերի ներմուծման մասին» 1950 թվականի նոյեմբերի 22-ի համաձայնագրի անդամ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների ներմուծումը կանոնակարգելու մասին» թիվ 112-Ն որոշման 2-րդ կետի, իրավահարաբերության ծագման պահին գործող Մաքսային միության մաքսային օրենսգրքի 122-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի, 3-րդ մասի 3-րդ կետի, 200-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 2-4-րդ մասերի իրավակարգավորումները՝ եզրահանգելով, որ «(...) մաքսային մարմինն իրականացնում է մաքսային ստուգում՝ նպատակ ունենալով ստուգելու նաև հայտարարատուների կողմից Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ և Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարումը: Ընդ որում, եթե Հայաստանի Հանրապետություն «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ներմուծվել են պայմանականորեն բաց թողնված ապրանքներ, որոնց դեպքում վերը նշված միջազգային պայմանագրի ուժով տրամադրվում են մաքսատուրքերի, հարկերի վճարման համար սահմանված արտոնություններ՝ զուգակցված այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման հետ կապված սահմանափակումներով, այսինքն՝ այդ ապրանքները կարող են օգտագործվել բացառապես արտոնությունների տրամադրման պայմաններին համապատասխանող նպատակներով, ապա մաքսային մարմինը ստուգում է դրանց օգտագործման և տնօրինման հետ կապված սահմանափակումների պահպանումը հայտարարատուների կողմից, քանի որ այդ ապրանքները համարվում են մաքսային հսկողության տակ գտնվող» (տե՛ս, «ՊԱՊԻՐՈՒՍ ԳԼՈՐԱԼ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/4724/05/17 վարչական գործով ՀՀ վճարեկ դատարանի 25.12.2019 թվականի որոշումը):

ՀՀ վճարեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթը Վճարեկ դատարանի գնահատմամբ ենթադրում է ոչ միայն միասնական դիրքորոշման ձևավորում՝ իրավական նորմի մեկնաբանության արդյունքում, այլև՝ ձևավորված դիրքորոշման հետագա զարգացում: Նման իրավիճակներում իրավունքի զարգացման արդյունքում ձևավորված նոր դիրքորոշումը պետք է գերակայի նախորդ դիրքորոշման նկատմամբ և հիմք ընդունվի Վճարեկ դատարանի նոր դիրքորոշումը՝ որոշման կայացման պահին դատարանների վարույթներում գտնվող գործերի լուծման համար:

Ըստ այդմ՝ Վճարեկ դատարանն ընդգծում է, որ իրավակիրառ պրակտիկայի առանձնահատկություններով պայմանավորված անհրաժեշտ է վերանայել թիվ

ՎԴ/4724/05/17 վարչական գործով 25.12.2019 թվականի որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած վերոգրյալ իրավական դիրքորոշումը, քանի որ Համաձայնագրի արձանագրության «Ը» հավելվածի միատեսակ կիրառությունն ունի էական նշանակություն:

Վճռաբեկ դատարանը, տվյալ դեպքում օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրական իր առաքելությունն իրացնելու և ըստ այդմ՝ սույն գործով Համաձայնագրի արձանագրության «Ը» հավելվածի կապակցությամբ իրավունքը զարգացնելու անհրաժեշտությունից ելնելով, հարկ է համարում անդրադառնալ նշված հավելվածով նախատեսված ապրանքները Հայաստանի Հանրապետություն ներմուծելուց հետո դրանց նկատմամբ մաքսատուրքերի, հարկերի վճարման համար սահմանված արտոնություններ կիրառելու առանձնահատկություններին:

Այսպես.

Համաձայնագրի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պայմանավորվող պետությունները պարտավորվում են հետևյալ նյութերի ներմուծման ժամանակ կամ ներմուծման հետ կապված չկիրառել մաքսատուրքեր և այլ վճարներ.

ա) գրքեր, հրատարակություններ և փաստաթղթեր, որոնք նշված են նույն Համաձայնագրին կից Ա հավելվածում.

բ) նույն Համաձայնագրին կից «Բ», «Գ», «Դ» և «Ե» հավելվածներում թվարկված և Պայմանավորվող այլ պետության արտադրանք հանդիսացող՝ կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութեր՝ այդ հավելվածներում նշված պայմանների պահպանման պայմանով:

«Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» 23.05.1969 թվականի Վիեննայի կոնվենցիայի (*Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 16.06.2005 թվականից*) «Մեկնաբանման ընդհանուր կանոնը» վերտառությամբ 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագիրը պետք է բարեխղճորեն մեկնաբանվի պայմանագրի հասկացությունների՝ դրանց համատեքստում ունեցած սովորական նշանակությանը համապատասխան, ինչպես նաև պայմանագրի առարկայի և նպատակի լույսի ներքո:

«Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ միջազգային պայմանագիրը մեկնաբանվում է դրա առարկայից և նպատակներից բխող պայմանագրի եզրույթներին տրված սովորական նշանակությանը համապատասխան և իրականացվում է միջազգային պայմանագրով և միջազգային իրավունքի նորմերով և սկզբունքներով սահմանված կարգով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան), անդրադառնալով միջազգային իրավական ակտերի մեկնաբանման կանոններին, նշել է, որ համաձայն Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդվածի 2-րդ կետի՝ պայմանագրի նախաբանը հանդիսանում է դրա անբաժանելի մասը: Ավելին, կոնկրետ միջազգային իրավական ակտը մեկնաբանելիս՝ նախաբանը, որպես կանոն, շատ օգտակար է դրա «առարկան» և «նպատակը» պարզելու համար (*տե՛ս, Golder v. United Kingdom of Great Britain (4451/70) գործով Եվրոպական դատարանի 14.02.1975 թվականի վճիռը, կետ 34*):

Համաձայնագրի նախաբանի համաձայն՝ պայմանավորվող պետությունները, համարելով, որ գաղափարների և գիտելիքի ազատ փոխանակումը և ընդհանրապես

քաղաքակրթությունների ինքնարտահայտման տարբեր ձևերի առավել լայն տարածումը կենսական նշանակություն ունեն ինչպես մտավոր առաջընթացի և միջազգային փոխըմբռնման, այնպես էլ, հետևաբար, ամբողջ աշխարհում խաղաղության պահպանման համար, համարելով, որ այդ փոխանակումներն իրականացվում են առաջին հերթին գրքերի, հրատարակությունների, ինչպես նաև կրթությանը, գիտությանը և մշակույթին վերաբերող նյութերի միջոցով, (...) ընդունում են, որ այդ նպատակների իրականացմանն արդյունավետորեն կծառայի կրթական, գիտական և մշակութային բնույթի գրքերի, հրատարակությունների և նյութերի ազատ տարածմանն աջակցող միջազգային համաձայնագիրը (...):

Հիմք ընդունելով Եվրոպական դատարանի վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Համաձայնագրի նպատակը բացահայտելու համար առաջնային նշանակություն ունի դրա նախաբանը: Համաձայնագրով սահմանված դրույթները չեն կարող մեկնաբանվել և կիրառվել Համաձայնագրով հետապնդվող նպատակի շրջանակներից դուրս, հետևաբար պայմանավորվող պետությունների կողմից Համաձայնագրով ստանձնած պարտավորությունները հետապնդվող նպատակների լույսի ներքո չմեկնաբանելը և չկիրառելը կհանդիսանան միջազգային պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտում, ոչ բարեխիղճ կատարում:

Այս դեպքում Համաձայնագրի նպատակների բացահայտման տեսանկյունից առավել իմաստալից նշանակություն ունի նախաբանի այն մասը, որում այն ստորագրած կողմերը հայտարարում են, որ *«(...) գաղափարների և գիտելիքի ազատ փոխանակումը և ընդհանրապես քաղաքակրթությունների ինքնարտահայտման տարբեր ձևերի առավել լայն տարածումը կենսական նշանակություն ունեն ինչպես մտավոր առաջընթացի և միջազգային փոխըմբռնման, այնպես էլ, հետևաբար, ամբողջ աշխարհում խաղաղության պահպանման համար (...):»*:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Համաձայնագիրը նպատակ է հետապնդում բոլոր ուղղակի և անուղղակի միջոցներով նպաստել գիտական, կրթական և մշակութային բնույթի գրքերի, հրատարակությունների և նյութերի հնարավորին լայնածավալ տարածմանը՝ ի թիվս այլնի, 1-ին հոդվածով նախատեսված նյութերի ներմուծման համար մաքսատուրքեր և ներմուծման հետ կապված այլ վճարներ չկիրառելու պոզիտիվ պարտականություն նախատեսելով Պայմանավորվող պետությունների համար: Նույն հոդվածի «բ» կետը ներմուծման համար գանձվող մաքսատուրքի (և ներմուծման հետ կապված այլ վճարների) գծով այդ արտոնության կիրառման համար նախատեսում է 2 պայման.

1) ներկրվող կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութը պետք է թվարկված լինի Համաձայնագրի «Բ», «Գ», «Դ» և «Ե» հավելվածներից մեկում,

2) ներկրվող կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութը պետք է հանդիսանա այլ պետության արտադրանք:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նշված հոդվածի պայմանները սպառիչ են, և Համաձայնագիրը դրա կիրառելիությունը չի պայմանավորում նյութերի ներկրումից հետո դրանք ներմուծող սուբյեկտի կողմից նպատակային նշանակությամբ օգտագործվելու կամ չօգտագործվելու հանգամանքով:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Պայմանավորվող պետությունները Համաձայնագրի 1-ին հոդվածի 1-ին կետով ստանձնել են միջազգային պարտավորություն՝ ազատել մաքսատուրքերից կամ ներմուծման հետ կապված այլ վճարներից Համաձայնագրի հավելվածներում թվարկված նյութերը ներմուծողին՝ պայմանով, որ այդ նյութերը բավարարեն հավելվածներով սահմանված պայմանները և հանդիսանան այլ Պայմանավորվող պետության արտադրանք: Իսկ նշված չափանիշներին բավարարող նյութերը ներմուծող սուբյեկտին մաքսատուրքերի և այլ վճարների վճարումից ազատելու համար դրանք հետագայում ներմուծողի կողմից նպատակային նշանակությամբ օգտագործելու պայմանի սահմանումը կհանգեցնի միջազգային պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտման: Այդ իրավիճակը կհանգեցնի նաև Համաձայնագրով ամրագրված սկզբունքների խախտման, քանի որ այդ սկզբունքները հետապնդում են գրքերի, հրատարակությունների, ինչպես նաև կրթությանը, գիտությանը և մշակույթին վերաբերող նյութերի միջոցով գաղափարների և գիտելիքի ազատ փոխանակմանը և տարածմանը նպաստելու նպատակ: Այդ նպատակին պետք է ծառայի նաև կրթությանը, գիտությանը և մշակույթին վերաբերող նյութերի՝ կրթության, գիտության, տեխնոլոգիաների և մշակույթի ոլորտներ առավել դյուրին և մատչելի կերպով մուտք գործելու հնարավորության ստեղծումը: Դա էլ իր հերթին արտահայտվում է Համաձայնագրում նշված կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերի (ապրանքների) ներմուծման դեպքում մաքսատուրքից կամ ներմուծման հետ կապված այլ վճարներից ազատելու՝ Պայմանավորվող Պետության պոզիտիվ պարտավորության անվերապահ կատարմամբ: Ընդ որում, Համաձայնագրով թվարկված կրթությանը, գիտությանը և մշակույթին վերաբերող նյութերի միջոցով գաղափարների և գիտելիքի ազատ փոխանակմանը և տարածմանը նպաստելու կարող է գործնականում կյանքի կոչվել ինչպես այն դեպքում, երբ հրատարակչական գործունեությունն իրականացվում է հենց այդ նյութերը ներմուծողի կողմից, այնպես էլ՝ երբ հրատարակչական գործունեությունն իրականացվում է ներմուծողից տարբերվող այլ սուբյեկտի կողմից: Տվյալ դեպքում ներմուծողը միջնորդի դերակատարություն ունի գրքերի, հրատարակությունների, ինչպես նաև կրթությանը, գիտությանը և մշակույթին վերաբերող նյութերի միջոցով գաղափարների և գիտելիքի ազատ փոխանակմանը և տարածմանը նպաստելու հարցում:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Համաձայնագրի անդամ պետությունն ունի Համաձայնագրով սահմանված չափանիշներին բավարարող կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերի (ապրանքների) ներմուծումը մաքսատուրքից կամ ներմուծման հետ կապված այլ վճարներից ազատելու պոզիտիվ պարտավորություն՝ անկախ այն հանգամանքից, թե այդ նյութերը ներմուծողի կողմից անմիջականորեն օգտագործվում են հրատարակչական գործունեության մեջ, թե օտարվում են այլ սուբյեկտների, որոնք այդ նյութերն օգտագործում են իրենց նպատակային նշանակությամբ: Այդ պարտավորությունը բխում է Համաձայնագրով մատնանշված հայեցակարգից առ այն, որ Համաձայնագիրն արդյունավետ միջոց է գաղափարների և գիտելիքների փոխանակումը խոչընդոտող մաքսային արգելքների նվազեցման և տնտեսական բնույթի այլ սահմանափակումների կրճատման համար:

Համաձայնագրով ստանձնած միջազգային պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարության կողմից 05.02.2015 թվականին ընդունված թիվ 112-Ն որոշմամբ մշակվել է առանց ներմուծման մաքսատուրքի վճարման Համաձայնագրի անդամ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների ներմուծման կարգը (այսուհետ՝ Կարգ), որը կարգավորում է առանց ներմուծման մաքսատուրքի վճարման Համաձայնագրի անդամ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների ներմուծման հետ կապված հարաբերությունները:

Կարգի 2-րդ կետի համաձայն՝ եզրակացություն տրամադրող Հայաստանի Հանրապետության լիազոր պետական կառավարման մարմինը (...) տրամադրում է Համաձայնագրի անդամ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների ներմուծման նպատակային նշանակության վերաբերյալ եզրակացությունը՝ իր իրավասությունների շրջանակներում:

Կարգի 3-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի թիվ 112-Ն որոշման թիվ 3 հավելվածով սահմանված կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքները, լիազոր մարմնի կողմից տրամադրված եզրակացության հիման վրա, ազատվում են ներմուծման մաքսատուրքից:

ՀՀ կառավարության վկայակոչված որոշմամբ սահմանված իրավակարգավորումներից ևս հետևում է, որ կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերի (ապրանքների) ներմուծումը մաքսատուրքից կամ ներմուծման հետ կապված այլ վճարներից ազատելը որևէ կերպ պայմանավորված չէ այն հանգամանքով, թե այդ նյութերը ներմուծողի կողմից անմիջականորեն օգտագործվում են հրատարակչական գործունեության մեջ, թե օտարվում են այլ սուբյեկտների, որոնք այդ նյութերն օգտագործում են իրենց նպատակային նշանակությամբ:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ կարևորվում է այն հանգամանքը, թե նշված ապրանքներն ի վերջո օգտագործվում են ներմուծման նպատակային նշանակությանը համապատասխան, թե ոչ: Այլ կերպ ասած, կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների ներմուծման համար մաքսային արտոնության տրամադրումը պայմանավորվում է ոչ թե նրանով, թե որ սուբյեկտն է դրանք օգտագործում՝ անմիջապես ներմուծողը, թե վերջինիս կողմից օտարման արդյունքում այդ ապրանքները ձեռք բերողը, այլ այն հանգամանքով, թե դրանք ի վերջո օգտագործվում են իրենց նպատակային նշանակությամբ, թե ոչ:

Հիմք ընդունելով վերոգրյալ վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Համաձայնագրով նախատեսված՝ կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերը չեն հանդիսանում պայմանականորեն բաց թողնված այնպիսի ապրանքներ, որոնց դեպքում մաքսատուրքերի և այլ վճարների համար սահմանված արտոնությունները զուգակցված են այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման հետ կապված սուբյեկտային սահմանափակումներով:

Այսպես՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանականորեն բաց թողնված են համարվում «ներքին

սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող այն ապրանքները, որոնց դեպքում՝

1) կիրառվել են ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման համար սահմանված արտոնություններ, որոնք զուգակցված են այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման հետ կապված սահմանափակումներով.

2) արգելքների և սահմանափակումների պահպանումը «Միության մասին» պայմանագրին և (կամ) անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան կարող է հաստատվել ապրանքների բացթողումից հետո. (...):»:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված՝ պայմանականորեն բաց թողնված ապրանքների առնչությամբ պետք է պահպանվեն ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների տրամադրման նպատակներն ու պայմանները, ինչպես նաև այդպիսի արտոնությունների կիրառման հետ կապված այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման մասով սահմանափակումները: (...):»:

Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ պայմանականորեն բաց թողնված ապրանքներն ունեն օտարերկրյա ապրանքների կարգավիճակ և գտնվում են մաքսային հսկողության ներքո մինչև Միության ապրանքների կարգավիճակ ձեռք բերելը:

Նույն հոդվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ պայմանականորեն բաց թողնված ապրանքները ձեռք են բերում Միության ապրանքների կարգավիճակ այն բանից հետո, երբ հաստատվել է նույն հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված ապրանքների մասով արգելքների և սահմանափակումների պահպանումը. (...):»:

Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 84-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հայտարարատուն պարտավոր է պահպանել մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների օգտագործման պայմանները կամ ապրանքների առանձին կատեգորիաների համար սահմանված այն պայմանները, որոնք, նույն օրենսգրքին համապատասխան, ենթակա չեն մաքսային ընթացակարգերով ձևակերպման:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ հայտարարատուն, անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, պատասխանատվություն է կրում նույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված պարտականությունները չկատարելու, մաքսային հայտարարագրում ոչ հավաստի տեղեկություններ ներկայացնելու, ինչպես նաև մաքսային ներկայացուցչին անվավեր, այդ թվում՝ կեղծ և (կամ) ակնհայտ ոչ հավաստի (սուտ) տեղեկություններ պարունակող փաստաթղթեր ներկայացնելու համար:

Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նույն օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված՝ պայմանականորեն բաց թողնված ապրանքների առնչությամբ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների տրամադրման նպատակների և պայմանների և (կամ) ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների կիրառման հետ կապված այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման սահմանափակումների պահպանումը համարվում է չհաստատված, եթե այդպիսի ապրանքների նկատմամբ մաքսային հսկողություն անցկացնելիս մաքսային մարմին ամբողջությամբ չեն ներկայացվել:

1) նշված ապրանքների՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների տրամադրման նպատակներով և դրանց տրամադրման պայմանների, ինչպես նաև այդպիսի ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման սահմանափակումների պահպանմամբ օգտագործումը հաստատող փաստաթղթեր:

2) նշված ապրանքները կամ դրանց գտնվելու վայրը հաստատված չէ:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել նույն օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին կետում նշված՝ պայմանականորեն բաց թողնված ապրանքների նկատմամբ ապրանքների բացթողումից հետո մաքսային հսկողություն անցկացնելու պարբերականությունը և դրա անցկացմանը ներկայացվող այլ պահանջներ:

Վերը նշված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 126-րդ հոդվածը սահմանում է պայմանականորեն բաց թողնված ապրանքների տեսակները, որոնցից են նաև այն ապրանքները, որոնք ներմուծման ժամանակ տրամադրվում են մաքսատուրքերի, հարկերի վճարման համար սահմանված արտոնություններ, որոնք զուգակցված են այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման հետ կապված սահմանափակումներով: Այդ ապրանքները կարող են օգտագործվել միայն արտոնությունների տրամադրման պայմաններին համապատասխանող նպատակներով:

Փաստորեն, Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ ներմուծողին տրամադրված արտոնությունը զուգակցված է եղել ներմուծված ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման հետ կապված սահմանափակումներով: Մինչդեռ, եթե նման սահմանափակումներ նախատեսված չեն եղել, ապա Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը կիրառելի չի կարող լինել, այդ թվում նաև ապրանքները միայն արտոնությունների տրամադրման պայմաններին համապատասխանող նպատակներով օգտագործելու առումով:

Մյուս կողմից՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 126-րդ հոդվածը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ այդ ապրանքների նկատմամբ առկա են օգտագործման կամ տնօրինման հետ կապված սահմանափակումներ, որոնք առնչվում են մաքսային հսկողություն անցկացնելիս նույն օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին կետում նշված փաստաթղթերի ներկայացման հետ:

Վճարեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ ըստ Համաձայնագրի՝ կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների ներմուծման համար մաքսային արտոնություն տրամադրելու իրավական հնարավորությունը պայմանավորված է բացառապես ներկրված նյութը Համաձայնագրի «Բ», «Գ», «Դ» և «Ե» հավելվածներից մեկում թվարկված լինելու և պայմանավորվող այլ պետության արտադրանք հանդիսանալու հանգամանքով: Այլ կերպ՝ Համաձայնագիրը նշված նյութերի ներմուծման համար մաքսային արտոնության կիրառելիությունը որևէ կերպ չի զուգակցել (չի պայմանավորել) դրանք ներմուծող սուբյեկտի կողմից անմիջականորեն նպատակային նշանակությամբ օգտագործելու կամ չօգտագործելու հանգամանքով: Բացի այդ՝ Համաձայնագիրը կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների ներմուծման

նկատմամբ չի սահմանում օգտագործման կամ տնօրինման հետ կապված սահմանափակումներ:

Ամփոփելով վերոգրյալը և իրացնելով ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածում ամրագրված օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու Վճռաբեկ դատարանի առաքելությունը և այդ առումով Համաձայնագրի կապակցությամբ իրավունքի զարգացումն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ իրավակիրառ պրակտիկան պետք է զարգանա այն ուղղությամբ, որ Համաձայնագրով նախատեսված կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերը, որոնց ներմուծման դեպքում կիրառվում են մաքսատուրքերի և այլ վճարների գծով արտոնություններ, չեն համարվում պայմանականորեն բաց թողնված ապրանքներ՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի իմաստով: Հետևաբար Համաձայնագրով նախատեսված կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերը ներմուծվելուց հետո դրանք անմիջականորեն ներմուծողի կողմից նպատակային նշանակությամբ օգտագործվելու կամ այլ անձանց օտարվելու հանգամանքները չեն կարող որևէ ազդեցություն ունենալ այդ նյութերի ներմուծման համար գանձվող մաքսատուրքի և ներմուծման հետ կապված այլ վճարների գծով արտոնության կիրառելիության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց վերջնական օգտագործումը չի համապատասխանում նպատակային նշանակությանը: Ասվածն էլ իր հերթին նշանակում է, որ կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների ներմուծման համար Համաձայնագրով նախատեսված մաքսային արտոնությունների կիրառումը պայմանավորված է ոչ թե նրանով, թե արդյոք ներկրվող ապրանքն իր նպատակային նշանակությամբ հետագայում օգտագործվել է հենց անմիջականորեն ներմուծողի կողմից, այլ նրանով, թե այդ ապրանքն ի վերջո օգտագործվել է իր նպատակային նշանակությամբ, թե ոչ:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունը 01.03.2018 թվականից 04.05.2021 թվականն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետություն է ներմուծել և տարբեր ծածկագրերով հայտարարագրել է տարբեր տեսակի թուղթ և ստվարաթուղթ:

Կոմիտեի հետբացթողումային հսկողության վարչության կողմից 04.05.2021 թվականին կազմվել է արտագնա մաքսային ստուգման թիվ 0017-Ա ակտը, որով արձանագրվել է, որ «(...) Ընկերությունը չունենալով արտադրական հնարավորություններ՝ փյազրափորուն, արտադրական սարքավորումներ և զբաղվելով բացառապես առևտրային գործունեությամբ՝ իր կողմից ՀՀ ներմուծված և մաքսավորուքերը չվճարելու արտոնությամբ մաքսային ձևակերպում ստացած, պայմանականորեն բաց թողնված ապրանքները իրացրել է ուղղակի վաճառքի միջոցով: (...) Ընկերության կողմից խախտվել է ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 126-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները՝ չեն պահպանվել ներմուծման մաքսավորուքերի, հարկերի վճարման արտոնությունների փրամադրման նպատակներն ու պայմանները, ինչպես նաև այդպիսի արտոնությունների կիրառման հետ կապված այդ ապրանքների օգտագործման և (կամ) փնօրինման մասով

սահմանափակումները»: Ընկերությանն առաջարկվել է վճարել պակաս գանձված մաքսային վճարները և տույժերը:

Ընկերությունը վարչական կարգով բողոքարկել է 04.05.2021 թվականի արտագնա մաքսային ստուգման թիվ 0017-Ա ակտը:

Կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի 27.07.2021 թվականի թիվ 53/2 որոշմամբ Կոմիտեի հետբացթողումային հսկողության վարչության արտագնա մաքսային ստուգման 04.05.2021 թվականի թիվ 0017-Ա ակտի դեմ Ընկերության դիմում-բողոքը մերժվել է:

Կոմիտեի հետբացթողումային հսկողության վարչության պետը 04.05.2021 թվականին կայացրել է «Մաքսային գործի ոլորտում» թիվ 0017-Ռ-1 որոշումը՝ մաքսային վճարների և մաքսային մարմիններին վճարվող այլ վճարների լրացուցիչ հաշվարկում ու գանձում կատարելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով նշված որոշումն ստանալուց հետո՝ 10 օրվա ժամկետում վճարել պակաս հաշվարկված մաքսային վճարները և տույժերը՝ համաձայն Հավելված 2-ի:

Ընկերությունը հայց է ներկայացրել Դատարան՝ պահանջելով ամբողջությամբ անվավեր ճանաչել 04.05.2021 թվականի թիվ 0017-Ռ-1 որոշումը:

Դատարանը 21.06.2022 թվականի վճռով հայցը բավարարել է՝ անվավեր է ճանաչել 04.05.2021 թվականի թիվ 0017-Ռ-1 որոշումը՝ պատճառաբանելով, որ «(...) Համաձայնագիրը դրա կիրառելիությունը պայմանավորում է նյութերի ներկրումից հետո դրանք նպատակային նշանակությամբ օգտագործվելու հանգամանքի հետ, անկախ նրանից, թե ով է դրանք նպատակային նշանակությամբ օգտագործում՝ ներկրողը՝ անմիջականորեն, թե երրորդ անձը, որը ներկրողից ձեռք է բերել խնդրո առարկա նյութը:

(...) սույն գործով բացակայում է որևէ փաստարկ, հիմնավորում կամ ապացույց այն մասին, որ ներկրված ապրանքն Ընկերության կողմից այլ անձանց օտարվելուց հետո օգտագործվել է ոչ իր նպատակային նշանակությամբ (չի օգտագործվել կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերի փոխադրական գործունեության մեջ):

Փաստորեն, սույն գործով վարչական մարմնի կողմից որևէ կերպ չի հիմնավորվել Ընկերության կողմից ներմուծված կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքն այլ նպատակային նշանակությամբ, քան հոչակված է Համաձայնագրում, օգտագործված լինելու փաստը: Իսկ այդ ապրանքն այլ անձի օտարված լինելու հանգամանքն, ինքնին, չի կարող բավարար ապացուցողական հենք ունենալ հաստատվելու համար այն փաստը, որ այդ ապրանքն օգտագործվել է ոչ իր նպատակային նշանակությամբ: (...):

Միևնույն ժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցը ենթակա է բավարարման, առաջնորդվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Դատարանն անվավեր է ճանաչել նաև Կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի 27.07.2021 թվականի թիվ 53/2 որոշումը:

Վերաքննիչ դատարանը 21.12.2023 թվականի որոշմամբ Կոմիտեի բողոքը բավարարել է ամբողջությամբ՝ Դատարանի վճիռը բեկանել և փոփոխել է՝ Ընկերության հայցը մերժել է:

Վերաքննիչ դատարանը նշել է հետևյալը. «(...) մաքսային մարմինը, նպատակ ունենալով ստուգելու Ընկերության կողմից Եվրասիական տնտեսական միության

մաքսային օրենսդրությամբ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարումը, ստուգմամբ բացահայտել է, որ «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն ներմուծված վերը նշված ապրանքները, որոնք հանդիսացել են պայմանականորեն բաց թողնված, և որոնց համար վերը նշված միջազգային պայմանագրի ուժով տրամադրվել են մաքսատուրքերի, հարկերի վճարման համար սահմանված արտոնություններ, չեն զուգակցվել այդ ապրանքների օգտագործման և փոխանցման հետ կապված սահմանափակումներով, այսինքն՝ դրանք չեն օգտագործվել բացառապես արտոնությունների տրամադրման պայմաններին համապատասխանող նպատակներով՝ չեն օգտագործվել գրքերի, հրատարակությունների և փաստաթղթերի արտադրության համար, այլ՝ վաճառքի եղանակով օտարման միջոցով փոխանցվել են երրորդ անձանց:

(...) պատասխանող՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման, արձանագրելով, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն գործել է իրեն վերապահված լիազորությունների շրջանակում, արդյունքում կայացնելով հիմնավորված վարչական ակտ: (...):»:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործով վիճարկվող վարչական ակտի կայացման համար հիմք է հանդիսացել այն, որ Ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված ապրանքների օգտագործման նպատակը չի համապատասխանել արտոնությունների տրամադրման համար Համաձայնագրի սահմանած պայմաններին:

Վճռաբեկ դատարանն անհիմն է գնահատում վարչական մարմնի այն պնդումը, թե Ընկերությունը, մեծածախ առևտրի ճանապարհով օտարելով ներկրված ապրանքը, օգտագործել է վերոհիշյալ ապրանքն արտոնությունների տրամադրման պայմաններին չհամապատասխանող նպատակներով: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մաքսատուրքից ազատված լինելն ուղղակիորեն նպաստում է շուկայում ներկրված ապրանքի անհամեմատ ցածր գին ունենալուն, ինչ էլ իր հերթին նպաստում է գիտական, կրթական և մշակութային բնույթի հրատարակությունների առավել լայնածավալ տարածմանը, այլ կերպ ասած՝ Համաձայնագրի նպատակներին, հետևաբար վարչական մարմինը պետք է կարևորեր և պարզեր այն հարցը, թե այդ ապրանքներն ի վերջո օգտագործվել են ներկրման նպատակային նշանակությամբ համապատասխան, թե՛ ոչ:

Սույն գործում առկա ապացույցների ուսումնասիրությունից հետևում է, որ առկա չէ որևէ իրավական ակտ, որով սահմանված լինի հենց ներմուծողի կողմից թղթի օգտագործման պարտադիր նպատակ՝ որպես արտոնությունից օգտվելու պայման: Ըստ Համաձայնագրի՝ կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների ներմուծման համար մաքսային արտոնություն տրամադրելու իրավական հնարավորությունը պայմանավորված է բացառապես ներկրված նյութը Համաձայնագրի «Բ», «Գ», «Դ» և «Ե» հավելվածներից մեկում թվարկված լինելու և պայմանավորվող այլ պետության արտադրանք հանդիսանալու հանգամանքով: Ընդ որում, Համաձայնագիրը նշված նյութերի ներմուծման համար մաքսային արտոնության կիրառելիությունը որևէ կերպ չի

պայմանավորել դրանք հենց ներկրողի կողմից ներկրման նպատակային նշանակությամբ օգտագործման կամ չօգտագործման հանգամանքով:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ապրանքների բնույթի հավաստումը դեռևս չի նշանակում, որ դրանց համար նախատեսված են ներմուծողի կողմից տնօրինման կամ օգտագործման սահմանափակումներ:

Անդրադառնալով սույն գործով վիճարկվող վարչական ակտով Ընկերությանը ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 126-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում վերագրելուն՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված իրավանորմը, տվյալ դեպքում, կիրառելի չէ, քանի որ մաքսատուրքի կամ ներմուծման հետ կապված այլ վճարների գծով Ընկերությանը տրամադրված արտոնությունը զուգակցված չի եղել ներմուծված ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման հետ կապված սահմանափակումներով:

Այսպիսով, Ընկերության կողմից ներմուծված ապրանքները չեն կարող որակվել որպես պայմանականորեն բաց թողնված ապրանքներ՝ ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի իմաստով, որպիսի իրավաչափ հետևության հանգել է Դատարանը, ինչը, սակայն, անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Սույն գործով վիճարկվող 04.05.2021 թվականի թիվ 0017-Ո-1 որոշումն անվավեր ճանաչելու մասին իրավաչափ եզրահանգում կատարելով հանդերձ՝ Դատարանը ոչ իրավաչափ եզրահանգում է կատարել Կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի 27.07.2021 թվականի թիվ 53/2 որոշումը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառմամբ անվավեր ճանաչման ենթակա լինելու մասին՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի 27.07.2021 թվականի թիվ 53/2 որոշումը կայացվել է Ընկերության կողմից 04.05.2021 թվականի արտագնա մաքսային ստուգման թիվ 0017-Ա ակտի վարչական կարգով ներկայացված բողոքի քննության արդյունքում: Ընդ որում, Ընկերության բողոքը Կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի 27.07.2021 թվականի թիվ 53/2 որոշմամբ մերժվել է: Այսինքն՝ Կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի 27.07.2021 թվականի թիվ 53/2 որոշումը վերաբերում է 04.05.2021 թվականի արտագնա մաքսային ստուգման թիվ 0017-Ա ակտի իրավաչափությանը, ուստի սույն գործով քննվող 04.05.2021 թվականի թիվ 0017-Ո-1 որոշումն անվավեր ճանաչելու հայցը չի կարող ներառել թիվ 0017-Ա ակտի դեմ ներկայացված վարչական բողոքի վերաբերյալ կայացված միջամտող վարչական ակտի վիճարկման պահանջը, ըստ այդմ նաև՝ հիմք հանդիսանալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառմամբ Կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի 27.07.2021 թվականի թիվ 53/2 որոշումը ևս անվավեր ճանաչելու համար:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ընկերությանը ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 126-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում չէր կարող վերագրվել, քանի որ մաքսատուրքի կամ ներմուծման հետ կապված այլ վճարների գծով Ընկերությանը տրամադրված արտոնությունը զուգակցված չի եղել ներմուծված ապրանքների

օգտագործման և (կամ) տնօրինման հետ կապված սահմանափակումներով, այսինքն՝ նշված իրավանորմը տվյալ դեպքում կիրառելի չէ: Ընդ որում՝ Կոմիտեի հետքացթողումային հսկողության վարչության 04.05.2021 թվականի արտագնա մաքսային ստուգման թիվ 0017-Ա ակտն անգամ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ չէր կարող դրվել Կոմիտեի հետքացթողումային հսկողության վարչության պետի 04.05.2021 թվականի թիվ 0017-Ո-1 որոշման հիմքում, քանի որ թիվ 0017-Ո-1 որոշման կայացման դրությամբ արտագնա մաքսային ստուգման թիվ 0017-Ա ակտը դեռևս անբողոքարկելի չէր դարձել, և դրանում արձանագրված ենթադրյալ խախտումները նախադատելի չէին կարող լինել:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը՝ հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերոգրյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածի համաձայն՝ գործի քննության հետ կապված այլ ծախսերն են, ի թիվս այլնի, նաև դատավարության մասնակիցների ներկայացուցիչների վճարները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած

գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե պատասխանող է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ պաշտոնատար անձը, ապա դատական ծախսերը դրվում են Հայաստանի Հանրապետության կամ համապատասխան համայնքի վրա, եթե պատասխանողի որոշումը, գործողությունը կամ անգործությունը դատարանը ճանաչել է ոչ իրավաչափ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ընկերությունը հայցադիմում ներկայացնելու համար վճարել է 4.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումար, վճռաբեկ բողոքի համար վճարել է 20.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումար: Հաշվի առնելով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, որի արդյունքում Ընկերության հայցը բավարարվում է, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության կողմից հայցադիմումի և վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումարը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով ենթակա է հատուցման Կոմիտեի կողմից:

Միևնույն ժամանակ վկայակոչված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի կազմում ներառել է նաև ներկայացուցիչների վճարները:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է փաստաբանի վարձատրության խելամտության և բռնագանձման հարցերին: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ փաստաբանի վարձատրության խելամտության հարցը որոշելիս անհրաժեշտ է ամբողջության մեջ հաշվի առնել գործով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը (ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը), գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի քննության տևողությունը), նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը, ինչպես նաև դատական ակտով բռնագանձվող գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափի հարաբերակցությունը (*տե՛ս, Ֆերդինանդ Առաքելյանն ընդդեմ Հարություն Պետրոսյանի թիվ ԵԿԴ/1587/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.06.2012 թվականի որոշումը*):

Տվյալ դեպքում, սույն գործում առկա չէ Ընկերության և վերջինիս ներկայացուցիչ Գոհար Ավագյանի միջև կնքված պայմանագիր այն մասին, որ Գոհար Ավագյանը պարտավորվել է իրավաբանական ծառայություններ մատուցել Ընկերությանը, իսկ Ընկերությունը պարտավորվել է վճարել մատուցված ծառայությունների դիմաց:

Ինչ վերաբերում է «Ի Էլ Էլ գործընկերություն» ՓԲԸ-ի և Ընկերության միջև 18.05.2021 թվականին կնքված «Իրավաբանական ծառայությունների մատուցման» թիվ 11-21-Ի պայմանագրին (**հատոր 1-ին, գ. թ. 48-53**), որի 1.1.1. կետով «Ի Էլ Էլ գործընկերություն» ՓԲԸ-ն պարտավորվել է իրականացնել թիվ 0017-Ո-1 որոշման արտադատական կարգով

վիճարկում Կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով, իսկ 1.1.2. կետով վարչական ակտի գանգատարկման արդյունքում վարչական ակտն անվավեր չճանաչվելու դեպքում «Ի Էլ Էլ գործընկերություն» ՓԲԸ-ն պարտավորվել է հայցադիմում ներկայացնել ՀՀ վարչական դատարան և նշված հայցի շրջանակներում իրականացնել Ընկերության շահերի պաշտպանություն վարչական դատարանում՝ հատուկ նշելով նաև, որ Ծառայությունները մատուցվում են առաջին ատյանի դատարանում, եթե կողմերն այլ գրավոր համաձայնության չգան, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այդ պայմանագիրը չի կարող հիմք հանդիսանալ Ընկերության և Գոհար Ավագյանի միջև «Իրավաբանական ծառայությունների մատուցման» պայմանագրի կնքված լինելը հաստատելու համար, քանի որ սույն գործով ՀՀ վարչական դատարանում որպես Ընկերության ներկայացուցիչ հանդես է եկել փաստաբան Մերի Վարդապետյանը՝ Ընկերության կողմից 29.06.2021 թվականին տրված լիազորագրի հիման վրա (**հատոր 1-ին, գ.թ. 15**), իսկ Վճռաբեկ դատարանում որպես Ընկերության ներկայացուցիչ հանդես է եկել փաստաբան Գոհար Ավագյանը՝ Ընկերության կողմից 08.08.2022 թվականին, տրված լիազորագրի հիման վրա (**ներկայացվել է վճռաբեկ բողոքին կից**), մինչդեռ Մերի Վարդապետյանի և Գոհար Ավագյանի «Ի Էլ Էլ գործընկերություն» ՓԲԸ-ի աշխատակից հանդիսանալու և վերջինիս կողմից կնքված պայմանագրի հիմքով Ընկերությանը ծառայություններ մատուցելու փաստը հաստատող որևէ գրավոր ապացույց վերը նշված պայմանագրին կամ լիազորագրերին կից չի ներկայացվել:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև փաստաբաններ Մերի Վարդապետյանը և Գոհար Ավագյանը սույն գործով համապատասխանաբար ՀՀ վարչական դատարանում և Վճռաբեկ դատարանում հանդես են եկել Ընկերության անունից՝ կատարելով վերջինիս իրավունքների պաշտպանությանն ուղղված անհրաժեշտ դատավարական գործողություններ, այդուհանդերձ ներկայացուցիչների վճարի գծով դատական ծախսերի հատուցման հարցը պետք է համարել լուծված՝ Ընկերության և փաստաբաններ Մերի Վարդապետյանի և Գոհար Ավագյանի միջև իրավաբանական վճարովի ծառայություններ մատուցելու մասին պայմանագիր ներկայացված չլինելու հիմքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 21.12.2023 թվականի որոշումը և փոփոխել այն՝ «ՊԱՊԻՐՈՍ ԳԼՈՐԱԼ» ՍՊ ընկերության հայցը բավարարել. անվավեր ճանաչել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հետքացթողումային հսկողության վարչության 04.05.2021 թվականի թիվ 0017-Ո-1 որոշումը:

2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեից հոգուտ «ՊԱՊԻՐՈՍ ԳԼՈՐԱԼ» ՍՊ ընկերության բռնագանձել 4. 000 ՀՀ դրամ, որպես հայցադիմում ներկայացնելու համար և

20.000 ՀՀ դրամ՝ որպես վճարելի բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի փոխհատուցման գումարներ:

Մնացած մասով դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

Նախագահող _____ **Հ. ԲԵԴԵՎՅԱՆ**

Զեկուցող _____ **Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ**

_____ **Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

_____ **Լ. ՀԱԿՈԲՅԱՆ**

_____ **Ք. ՄԿՈՅԱՆ**